

Այս հոռույանքս ընտանիքի մեջ, ձեր այս փափակ-
 Որ հանդարտիկ եղև հոգեկան երթալ խաղաղ,
 Գեղեզմանիս ծաղկ աբնէ Հայոց ինծադ...
 Ո՛հ, թող մեռնի ձեր Նահապետ, մոռու տապան.
 Այլ թող եղև՝ ի տապանէն Նոր Հայաստան:

Նա յուշի ունէր գնալ ասելու թէ՛ Հայոց
 աշխարհի գեղեցիկ գարունն եկել է. ու
 Նոր Հայաստանն տապանէն յարութիւն
 առել: Գեղեզմաննոցի մուտքին՝ երբեմն
 Հ. Ալիշանի գրած դամբանական վերտա-
 ութիւնը՝ ուղեց վերստին ձայնով կար-
 դալ:

Ի հայրենեաց նժդեհը յօտար յանխուլ կղզիս
 Ի սպաս փրկիւն, Մօրն կուսի և Հայ Ազգիս.
 Ուր միաբան վաստակեցին հանգիւն և անդ
 Հարց և եղբարք Միթիթարեանք յոյս անվանդ.
 Յարփիւնաւ մահաւաղած կենացն առուր.
 Նորադիտակց զուգապարել լուսափստուր:

Նա որ գրեց, Միթիթարայ և Ազգիս ան-
 վրկանդ յոյսերու մեծն, կը հանգչէր անդ
 յաւիտենական լուսութեամբ:

Հոն մենք բոլորս պատկառանքով Մեծ
 Նահապետի գեղեզմանի վրայ խոնարհած
 մեր ճակատները ասացինք. Հոգւոց... Ու
 մտքով սլանալով Արեւելը դէպ ի Ազատն
 Մասիս և Հայրենիք, մրմնջեցինք անոր
 ուխտը:

Աւ ես Նահապետ ցամաք ծերունիս՝
 Երթամ մեր հին հարցըն տամ աւետիս,
 Ասեմ, թէ գարուն երկէ տան Հայոց,
 Դուք Նահապետիս ասացէ՛ք՝ Հոգւոց.
 Եւր Նահապետիդ՝ տուր կակուղ հոգիկ
 Որ զքեզ պինդ սիրեց, Հայոց աշխարհիկ:

Մահու խստութիւնն ալ ունի իւր վսեմ
 և հմայիչ ներգործութիւնը: Հուզոյ Փոսկու-
 լոյ կը գրէր առ իւր սիրելի բարեկամն.

Երբեք քաջանց՝ զարի ոգին, ո՛վ Պինդեմոնս,
 Առ մեծամեծքս վառն, և գեղեցիկ և սրբանուէր
 Ընծայն պանդըխտին զասպնջականն իւրեանց զերկիր:

Ս. Ղազարու ասպնջական կղզեկին մէջ
 կը հանգչի Հայրենիքի մեծ զաւակը Հ.
 Ալիշան: Նա որ. սիրեց զԱստուած և

ապրեցաւ Հայրենիքի համար՝ Հնասառ մեր
 պատմական օրերուն, Հունեցաւ միթիթա-
 րութիւն տօնելու Հայրենիքի ազատութիւ-
 նը: Մեր հին Հարց հետ, իրեն ալ անոր
 աւետիսը բերաւ Հայկական Հանրապե-
 տութեան խորհուրդին Նախագահը: Վե-
 րածնութեան սոսափիւնը անցաւ ամենքի
 սրտերէն, ան Եւր Նահապետի բարեն էր:

Դարձանք նաւամատոյցի վրայ, ուր
 Միաբանութեան կողմէն, խորին շնորհա-
 կալութիւններ և արեւշատութեան մաղ-
 թանքներ կրկնուեցան Պարոն Նախագա-
 հին, Տիկին Նուբարդին և Պրոֆ. Սիմոն
 Յակոբեանին իրենց անակնկալ և թան-
 կազին այցելութեան համար: Անմոռաց
 յիշատակի օր մը՝ ճերմակ պիտակի վրայ
 գրուելու արժանի: Սիրալիւր ողջերթի ու-
 ղերձներու և ծափերու ցնձազին ձայներու
 մէջ՝ շարժեցաւ Պարոն Նախագահի մակոյկը,
 թողլով մեզի օրուան գեղեցիկ Յուշը և
 Հայրենիքի կարօտը:

ՄԵՂՈՒ ՇԻՐԱԿԱՅ

Մ Ի Ծ Ի Ծ Ա Ղ Ի Ր

□ □

Ո՛հ, ամբարձրտ, մի՛ ծիծաղիր
 Յաղթանակի պարծանքով,
 Եթէ՛ երբեք (սըտապատիր
 Խարդախութեանց բիւր ջանքով)
 Նենգ վախճանին մուրա մըտքիդ՝
 Ո՛հ, զազրաբար զաս հասնիս...

✱

Մէն մարդու պէս մանրակրկիտ
 Օր մ'հաշիւ տալ կը պարտիս...

Ո՛հ, ամբարձրտ, մի՛ հեգնաբար ծիծաղիր,
 — Այսօր՝ թէ ինձ, վաղն ալ քեզի, —

Բոյն մ'է ցաւոց՝ գեղեցկութիւնն ի ծարր,
 Ա՛ղտ մը՝ սընգոյրն երեսի:
 «Հոգեխաւիղ Նուազմիւր» Հ. Գ. ԱՅՏԵՆԵԱՆ